

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-51-Ն օրենքում (այսուհետ՝ Օրենք)

1) 1-ին հոդվածը լրացնել 3-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Ապահովված պահանջների բավարարման առանձնահատկությունները, ինչպես նաև ապահովված պահանջների բավարարման համար պարտապանի գույքի տիրապետման, օգտագործման կամ տնօրինման առանձնահատկությունները կարգավորվում են սույն օրենքի 39-րդ և 43-րդ հոդվածներով»:

2) Օրենքի 13-րդ հոդվածում՝

ա. 2-րդ մասում «օրենքի 22-րդ հոդվածով» բառերը փոխարինել «հոդվածի 2.1-րդ մասով» բառերով,

բ. լրացնել 2.1-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում դատարանը որպես սնանկության ժամանակավոր կառավարիչ նշանակում է՝

ա) հարկադիր սնանկության դիմումով հարուցված գործի դեպքում՝ պարտատիրոջ ներկայացրած թեկնածուին, իսկ եթե թեկնածուին ներկայացված չէ, կամ բացակայում են այդ թեկնածուի վերաբերյալ սույն օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջները հիմնավորող փաստաթղթերի պատճենները և սնանկության գործին մասնակցող անձանց պատճառված վնասի համար թեկնածուի քաղաքացիական պատասխանատվության ապահովագրական պոլիսը, ապա՝ կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության կողմից սույն օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով ներկայացրած թեկնածուին: Ընդ որում, դատարանը ժամանակավոր կառավարչի թեկնածություն ներկայացնելու պահանջագիրը կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությանն է ներկայացնում դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում.

բ) կամավոր սնանկության դիմումով հարուցված գործի դեպքում՝ կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության կողմից սույն օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով ներկայացրած թեկնածուին: Ընդ որում, դատարանը ժամանակավոր կառավարչի թեկնածություն ներկայացնելու պահանջագիրը կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությանն է ներկայացնում դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում»:

Հոդված 2. Օրենքի 39-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի «դ» կետից «(այդ թվում՝ ապահովված)» բառերը հանել.

2) 3-րդ մասում՝

ա. «բ» կետում «վրա» բառը փոխարինել «վրա,» բառով.

բ. լրացնել «գ» և «դ» կետերով հետևյալ բովանդակությամբ՝

«գ) գրավով ապահովված պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալու կամ նրանց՝ գրավով ապահովված պահանջների բավարարման համար ցանկացած գործարքի կամ դրա կատարմանն ուղղված ցանկացած գործողության կամ գործընթացի վրա, եթե ապահովված պարտատերը մորատորիում չտարածելու մասին ծանուցել է դատարանին.

դ) ի ապահովվումն սնանկության գործընթացում գտնվող պարտապանի պարտավորությունների կատարման՝ երաշխիք կամ երաշխավորություն տված անձանց կողմից այդ երաշխիքի կամ երաշխավորության գծով դրամական կամ այլ բավարարում տալու կամ դրա կատարմանն ուղղված ցանկացած գործողության կամ գործընթացի վրա: Ընդ որում՝ պարտապանի սնանկության գործընթացը չի ազդում ի ապահովվումն պարտապանի պարտավորությունների կատարման երաշխիք կամ երաշխավորություն տված անձի՝ երաշխիքով կամ երաշխավորությամբ ստանձնած պարտավորությունների կատարման վրա»:

Հոդված 3. Օրենքում՝

1) 41-րդ հոդվածի 1-ին մասը «ուղղված է» բառից հետո լրացնել «սույն օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերում» բառերով:

2) 43-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Հոդված 43. Ապահովված պահանջները, դրանց բավարարումը

1. Ապահովված են համարվում գրավով (այդ թվում՝ երրորդ անձին պատկանող գույքի գրավով), երաշխիքով կամ երաշխավորությամբ ապահովված պահանջները: Ապահովված պարտատերեր են համարվում ապահովված պահանջներ ունեցող անձինք՝ այդ պահանջների մասով:

2. Մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցած գրավով ապահովված պարտատերը չի ընդգրկվում սնանկության գործով պարտատերերի ցանկում, և նրա ապահովված պահանջները բավարարվում են բացառապես այդ պարտավորության համար գրավադրված գույքի իրացման (այդ թվում գործող օրենսդրությամբ սահմանված առանց դատարան դիմելու) հաշվին: Այդ դեպքում պարտատերը, անկախ ապահովված պահանջների բավարարման չափից, տվյալ պարտավորության մասով հետագայում չի կարող որևէ պահանջ ներկայացնել պարտապանի այլ գույքի նկատմամբ:

3. Երաշխիքով կամ երաշխավորությամբ ապահովված պարտատիրոջ պահանջները, այդ թվում՝ ապահովված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պայմանագրով սահմանված տուժանքները, տուգանքները և վճարման ենթակա տոկոսները, կարող են բավարարվել երաշխիք կամ երաշխավորություն տված անձի միջոցների հաշվին: Երաշխիք կամ երաշխավորություն տված անձի պահանջ չներկայացնելու դեպքում պարտատերը սույն օրենքի 46-րդ հոդվածով սահմանված կարգով ընդգրկվում է սնանկության գործով պարտատերերի ցանկում և իր պահանջների բավարարումն ստանում է սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով: Ընդ որում՝ երաշխիքով կամ երաշխավորությամբ ապահովված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պարտապանի սնանկության գործընթացում հաշվարկված՝ պայմանագրով սահմանված տուժանքների, տուգանքների և վճարման ենթակա տոկոսների գումարները չեն կարող պահանջվել պարտապանից:

4. Մորատորիում չտարածելու մասին դատարանին չծանուցած գրավով ապահովված պարտատերը ընդգրկվում է սնանկության գործով պարտատերերի ցանկում և իր ապահովված պահանջների բավարարումն ստանում է սույն հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ և 9-րդ մասերով սահմանված կարգով:

5. Պարտատերերի ցանկում ընդգրկված գրավով ապահովված պարտատերը կարող է պահանջել իր՝ գրավով ապահովված պարտավորությունը առաջնահերթ կերպով բավարարել գրավադրված գույքի վաճառքից ստացված միջոցներից:

6. Պարտատերերի ցանկում ընդգրկված գրավով ապահովված պարտատերը չի կարող մասնակցել պարտապանին պատկանող իր համապատասխան պարտավորության համար չգրավադրված գույքի իրացումից ստացված միջոցների բաշխմանը մինչև գրավադրված գույքի իրացումը, քանի դեռ գրավադրված գույքի արժեքն ավելի կամ հավասար է ապահովված պարտատիրոջ պահանջին, բացառությամբ դատարանի որոշմամբ համարժեք պաշտպանության տրամադրման դեպքերի: Եթե գրավադրված գույքի արժեքը (մեկնարկային գինը) հրապարակային սակարկություններով իրացման ընթացքում կամ գույքի կորստի (ոչնչացման, հաշտակման) կամ վնասման արդյունքում նվազում է ապահովված պահանջի չափից, ապա ապահովված պարտատերը ձեռք է բերում քվեարկության ծայնի իրավունք՝ այդ նվազման չափով:

7. Եթե համապատասխան գրավի առարկայի իրացումից ստացված միջոցները բավարար չեն պարտատերերի ցանկում ընդգրկված ապահովված պարտատիրոջ պահանջներն ամբողջովին մարելու համար, ինչպես նաև երաշխիքով (երաշխավորությամբ) ապահովված պահանջների չբավարարված (այդ թվում՝ երաշխիք կամ երաշխավորություն տված անձից պարտավորության կատարում չպահանջելու հետևանքով չբավարարված) մասը (բացառությամբ այդ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պարտապանի սնանկության գործընթացում հաշվարկված՝ պայմանագրով սահմանված տուժանքների, տուգանքների և վճարման ենթակա տոկոսների գումարների) համարվում է չապահովված պահանջ, իսկ պարտատերը՝ չապահովված պարտատեր՝ չապահովված պահանջի չափով:

8. Եթե գրավի առարկայի իրացումից ստացված միջոցները գերազանցում են համապատասխան ապահովված պահանջի գումարը, ապա գերազանցող գումարի մասով այդ միջոցների նկատմամբ

տարածվում է մորատորիում, և այդ միջոցները բաշխվում են սույն օրենքով սահմանված հերթականությամբ, իսկ եթե գրավի առարկան այլ անձի սեփականություն է՝ փոխանցվում են այդ անձին:

9. Եթե գրավի առարկայի շուկայական արժեքը հավասար է ապահովված պարտատիրոջ պահանջի գումարին կամ ցածր է դրանից, ապա պարտատերերի ցանկում ընդգրկված պարտատերն իրավունք ունի իր պահանջի կամ դրա մասի չափով դատարանի որոշմամբ որպես սեփականություն իր կամ իր նշած անձի օգտին ստանալու գրավի առարկան՝ փոխհատուցելով այդ գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, ինչպես նաև կառավարչի վարձատրությունը՝ գրավի առարկայի արժեքի 5 տոկոսի չափով: Այդ դեպքում տվյալ պարտատիրոջ պահանջի չափը չի նվազեցվում գույքի պահպանման և փոխանցման ծախսերի և կառավարչի վարձատրության համար վճարված գումարի չափով:

10. Եթե պարտատերերի ցանկում ընդգրկված ապահովված պարտատիրոջ պահանջն ապահովված է երրորդ անձի գույքի գրավով, ապա այդ անձն իրավունք ունի դադարեցնելու գույքի գրավադրումը՝ սնանկության հատուկ հաշվին որպես դեպոզիտ փոխանցելով՝

1) գույքի առաջիկա իրացման համար գնահատված կամ մեկնարկային գինը հիմնական ապահովված պարտավորության արժեքի չափը գերազանցելու դեպքում՝ ապահովված պահանջի, գույքի պահպանման եւ փոխանցման հետ կապված ծախսերը:

2) գույքի առաջիկա իրացման համար գնահատված կամ մեկնարկային գինը հիմնական ապահովված պարտավորության արժեքի չափից պակաս լինելու դեպքում՝ վերջին չկայացած աճուրդի մեկնարկային գնի չափով:

11. Երրորդ անձ գրավատուն, երաշխավորը կամ երաշխիք տվող անձը պարտապանի նկատմամբ օրենսդրությամբ սահմանված կարգով պահանջ ձեռք բերելու դեպքում այդ պահանջը ենթակա է բավարարման որպես սույն օրենքի 82-րդ հոդվածի առաջին մասի «գ» կետով նախատեսված պահանջ:»:

Հոդված 4. Օրենքի 44-րդ հոդվածը «Գրավով» բառից հետո լրացնել «կամ երաշխիքով (երաշխավորությամբ)» բառերով:

Հոդված 5. Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասում «, ինչպես նաև ցանկացած այլ գույք, որը գրավադրվել է երրորդ անձի կողմից՝ ի ապահովում պարտապանի կողմից իր պարտավորությունների պատշաճ կատարման» բառերը փոխարինել «: Ի ապահովումն պարտապանի՝ սույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցած գրավով ապահովված պարտատիրոջ առջև ստանձնած պարտավորության համար գրավադրված գույքը (այդ թվում՝ երրորդ անձին պատկանող) չի ընդգրկվում պարտապանի գույքի կազմում, բացառությամբ դրա իրացումից ստացված միջոցների, որոնք պարտապանի գույքի կազմում են ընդգրկվում սույն օրենքի 43-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքում:» բառերով:

Հոդված 6. Օրենքի 50-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով՝

«6. Սույն հոդվածով սահմանված սահմանափակումները չեն տարածվում սույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում ապահովված պահանջների բավարարման համար նախատեսված գործարքների կամ այդ գործարքի կատարման վրա: Այդ գործարքները կնքվում և կատարվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով ու պայմաններով:»:

Հոդված 7. Օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 8. Օրենքի 54-րդ հոդվածը լրացնել 3-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝

«3. Սույն հոդվածով նախատեսված դեպքերում փոխանցված գույքը կամ դրա արժեքը չի կարող հետ պահանջվել, եթե դրանք փոխանցվել են բանկի կամ վարկային կազմակերպության ապահովված պահանջների բավարարման համար այդ գույքի հետ կապված գործարքների կատարման արդյունքում:»:

Հոդված 9. Օրենքի 82-րդ հոդվածում՝

1) վերնագրում «Պահանջների» բառը փոխարինել «Չապահովված պահանջների» բառերով:

2) 1-ին մասում «Պարտատերերի պահանջները» բառերը փոխարինել «Պարտատերերի չապահովված պահանջները» բառերով:

3) 3-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

«Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ Օրենք) լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ 1-ին ընթերցումից հետո ստացված դիտողությունների և առաջարկությունների

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, մասը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը	Նախագծի վերաբերյալ առաջարկությունը	Եզրակացություն
1	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ղավիթ Հարությունյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով առաջարկում են փոփոխություն կատարել Օրենքի 13-րդ հոդվածում՝ սահմանելով հետևյալը. 1) 2-րդ մասում «օրենքի 22-րդ հոդվածով» բառերը փոխարինել «հոդվածի 2.1-րդ մասով» բառերով, 2) Լրացնել 2.1-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «2.1. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում դատարանը որպես սնանկության ժամանակավոր կառավարիչ նշանակում է՝ ա) հարկադիր սնանկության դիմումով հարուցված գործի դեպքում՝ պարտատիրոջ ներկայացրած թեկնածուին, իսկ եթե թեկնածուն ներկայացված չէ, կամ բացակայում են այդ թեկնածուի վերաբերյալ սույն օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջները հիմնավորող փաստաթղթերի պատճենները և սնանկության գործին մասնակցող անձանց պատճառված վնասի համար թեկնածուի քաղաքացիական պատասխանատվության ապահովագրական պոլիսը, ապա՝ կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության կողմից սույն օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով ներկայացրած թեկնածուին: Ընդ որում, դատարանը ժամանակավոր կառավարչի թեկնածություն ներկայացնելու պահանջագիրը կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությանն է ներկայացնում դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում. բ) կամավոր սնանկության դիմումով հարուցված գործի դեպքում՝ կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության կողմից սույն օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով ներկայացրած թեկնածուին: Ընդ որում, դատարանը ժամանակավոր կառավարչի թեկնածություն ներկայացնելու պահանջագիրը կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությանն է ներկայացնում դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում:»: Առաջարկությունը պայմանավորված է Օրենքի հոդվածների (մասնավորապես՝ Օրենքի 11-րդ և 13-րդ հոդվածների) միջև հակասությունները վերացնելու անհրաժեշտությամբ	Ընդունվել է:

2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին ենթակետ	Նախագծի 1-ին հոդվածում առաջարկում ենք սահմանել, որ ապահովված պահանջների բավարարման, ինչպես նաև ապահովված պահանջների բավարարման համար պարտապանի գույքի տիրապետման, օգտագործման կամ տնօրինման առանձնահատկությունները կարգավորվում են սույն օրենքի 39-րդ և 43-րդ հոդվածներով՝ տարակարծիք մեկնաբանություններից խուսափելու համար:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ ենթակետ	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ ենթակետում առաջարկում ենք երաշխիքով կամ երաշխավորությամբ ապահովված պարտատերերին երաշխիք կամ երաշխավորություն տված անձանց կողմից դրամական կամ այլ բավարարում տալու կամ դրա կատարմանն ուղղված ցանկացած գործողության կամ գործընթացի վրա մորատորիումի չկիրառելու վերաբերյալ դրույթը տարածել միայն սնանկության գործընթացում գտնվող պարտապանի պարտավորությունների կատարման համար երաշխիք կամ երաշխավորություն տված անձանցից բավարարում ստանալու գործընթացի վրա: Այս պարագայում մորատորիում չտարածելու վերաբերյալ դրույթը առաջարկում ենք չկապել ապահովված պարտատիրոջ իրավունքի իրացման հնարավորության հետ: Խնդիրը կայանում է նրանում, որ երաշխիք կամ երաշխավորություն տված անձինք չեն գտնվում սնանկության վարույթում և նրանցից սնանկության վարույթում գտնվող պարտապանի պարտավորությունների կատարման պահանջների սառեցումը չի բխում սնանկության գործընթացների արդյունավետ իրականացման տրամաբանությունից:	Ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ կետ	Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ կետով խմբագրվող օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասում առաջարկում ենք նախատեսել, որ երաշխիք կամ երաշխավորություն տված անձի միջոցները բավարար չլինելու կամ երաշխիք կամ երաշխավորություն տված անձին պարտատիրոջ կողմից պահանջ չներկայացնելու դեպքում երաշխիքով կամ երաշխավորությամբ ապահովված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պարտապանի սնանկության գործի ընթացքում հաշվարկված՝ պայմանագրով սահմանված տուժանքների, տուգանքների և վճարման ենթակա տոկոսների գումարները չեն կարող պահանջվել պարտապանից: Նշված առաջարկությունը պայմանավորված է սնանկության գործընթացում գտնվող պարտապանի շահերի պաշտպանությամբ:	Ընդունվել է:
5.	ՀՀ կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածով առաջարկում ենք հստակեցնել, որ մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցած գրավով ապահովված պարտատիրոջ առջև ստանձնած պարտավորության համար գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցները պարտապանի գույքի մեջ ընդգրկվում են ապահովված պահանջի գումարը գերազանցող մասով:	Ընդունվել է: